13 ՅՈՒՆԻՍ 1995. ԵՐԵՔՇԱԲԹԻ # 109 (863)

Azg

Azg
armenian daily

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի եւ իր տիկնոջ դատասխանը ՀՈԱԿ Հանրապետական վարչությանը

Հունիսի 9-ին Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը Ֆրանսիայի նորընտիր նախագահ Ժակ Շիրակի եւ իր տիկնոջ՝ Բեռնադետ Շիրակի դատասխանն ստացավ ավելի վաղ իր հղած շնորհավորական ողերձի առթիվ: Դատասխան ողերձում ասված է.

Բեռնադետը եւ ես շատ զգացվեցինք ձեր բարեկամական շնորհավորանքներից: Մենք ի սրտե շնորհակալություն ենք հայտնում դրա համար եւ ձեզ հղում մեր նվիրական մտորումները:

Բեռնադետ եւ Ժակ Շիրակներ

ԲԵՅՐՈՒԹ

ՈԱԿ Լիբանանի դատվիրակության այցը Ռուսաստանի դեսպանին

Հունիսի 6-ին Ռամկավար Ազատական կուսակցության Լիբանանի շրջանային վարչության դատվիրակությունն այցելել է Լիբանանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Գեննադի Իլյիչեւին եւ շուրջ երկու ժամ զրույց ունեցել տարբեր հարցերի մասին, ինչպես տեղեկացնում է ՈԱԿ Բեյրութի դաշտոնաթերթ «Շարքանը»: Դատվիրակությունը ցավ է հայտնել Նեւթեգորսկ քաղաքի երկրաշարժի զոհերի համար, ինչի առթիվ դեսպանը շնորհակալություն է հայտնել եւ նկատել տվել, թե բոլորից շատ հայերս ենք գիտակցում նման ողբերգությունների անխուսափելիությունը: ՈԱԿ ներկայացուցիչները դեսպանին տեղեկություններ են տվել Լիբանանում թե տիրուժի այլ գաղութներում կուսակցության գործունեության մասին, միաժամանակ ներկայացնելով ՀՈԱԿ-ի Հայաստանում ծավալած աշխատանքները: Վերջավորության կողմերը ցանկություն են հայտնել նման հանդիպումները շարունակելու: ■

Ռուբեն Մոզյանը Արգենտինայում Հայաստանի դեսպանության երկրորդ քարտուղար

Արգենտինայում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը հաղորդել է, որ ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանի կարգադրությամբ Հայաստանի դեսպանության երկրորդ քարտուղար է նշանակվել Ռուբեն Մոզյանը:

Մեր կողմից ավելացնենք, թե Ռուբեն Մոզյանը մի շարք կողմնակիցների հետ ՀՅԴ Հարավային Ամերիկայի ԿԿ-ի կողմից արտաքսվել էր կուսակցության շարքերից: Նա դատասխանատու դաշտոններ է վարել ՀՅԴ մարմիններում:

Թալանվել է դատգամավոր Իսագուլյանի գրասենյակը

«Ըստ իմ ունեցած տեղեկությունների, շաբաթ օրը, այն դահին, երբ ելույթ էի ունենում, ԵԳՆ 4-րդ վարչությունից ջարդել են իմ գրասենյակի դուռը, մտել սենյակ եւ բալանել ամեն ինչ», այսպիսի սի հայտարարությամբ երեկ հանդես եկավ ՀՀ Գխ դատգամավոր Գառնիկ Իսագուլյանը: Նրա ասելով, ներխուժելու թույլտվությունը դատախազությունը տվել է բնությունը որոնելու դատվակով: Գառնիկ Իսագուլյանի ասելով, տարվել են 21 բռնվածների վերաբերյալ դատրասված փաստաթղթերը, նրանց ընտանիքներին ցույց տվող օգնության համար գրասենյակ բերված 60 լիտր бենզին, 2 դարակ այլուր, 56 մարդական համազգեստը: Գառնիկ Իսագուլյանի ասելով, իրեն շարունակ հետաքրքրում են երկու մեքենա, միաժամանակ հիշեցնելով նաեւ, թե ինքը այժմ կրկնակի անձեռնմխելի անձ է եւ դատգամավոր, եւ դատգամավորության բեկնածու:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

«Ասպետները» ձեռնոցը նետում են նախապես ոչնչացնելով մրցակիցներին

Ավարտից պատգամավորության թեկնածուների գրանցումը

Հայաստանի Հանրապետությունում հունիսի 10-ին ավարտվեց Ազգային ժողովի դատգամավորների համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով առաջադրված թեկնածուների գրանցումը: Համամասնական ընտրակարգին նախապես մասնակցելու ցանկություն հայտնած 22 հասարակական-քաղաքական կազմակերպություններից ԿԸՀ-ն թողունց միայն 18-ի փաստաթղթերը: Մերժվածների թվում էին «Հայկանդամանը», «Աբխազավորական Հայաստան», միությունը, ՀՀՀԴ-ն եւ «Հայ միասնական» կուսակցությունը: Մնացած 18-ից դուրս մղվեցին եւս 5-ը՝ «Ազգային առաջադիմություն», «Ազգային դաշինք-Դաշնակցություն», «Կանայք Հայոց աշխարհի» հասարակական-քաղաքական կազմակերպությունները, Հայաստանի Թագավորական եւ Ցեղադրական կուսակցությունները: Մնացյալ 13-ն ամբողջացնում են ԱԺՄ-ն, ԱԻՄ-ը, «Ազգային դեմոկրատիան», ՀԴԱԿ-ը, «Առաքելությունը», «Ժողովրդական կազմակերպությունը», «Հայաստանի ազգային ժողովրդավարական կուսակցությունը», ԳԻԱՐՔՄ-ը, ՀԿԿ-ն, «Հանրապետություն» միավորումը, «Շամիրամ», «Կամք եւ Հայ դաշնակցություն» կուսակցությունների միավորումը:

Իսկ երկրորդ, նշված կազմակերպությունների առաջադրած դատգամավորության թեկնածուների համամասնական ցուցակները եւս անփոփոխ չմնացին: Տարբեր դատճառներով դրանցից շատերը կրճատման ու վերաձեւման ենթարկվեցին: Սակայն այստեղ առավել կարեւորն այն է, որ համամասնական ընտրակարգով մրցակցությունից դուրս մղվեցին ընդդիմության հիմնական ուժերը դրանով զրկվելով նաեւ ընտրատարածքային եւ տեղամասային հանձնաժողովներում մաս կազմելուց:

Տես էջ 8

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ինչպիսի՞ կառավարություն՝ իշխո՞ղ, թե՞ կառավարող», հարց է տալիս ՀՈԱԿ ներկայացուցիչը

ՀՀ Գխ դատգամավոր, Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության անդամ, «Պայքար» ամսագրի գլխավոր խմբագիր, ԱԺ համամասնական ընտրությունների ՀՈԱԿ-ի թեկնածու (թիվ 6) Հարություն Դարագեսարյանը մեր թղթակցի հետ ընդարձակ հարցազրույց ունեցավ դեսպան կարգասարի, ժողովրդավարության, ազատականության, բազմակարծության եւ Սահմանադրության մասին: Ստորեւ գլխավոր հատվածներ:

– Ներկա նախընտրական բոհուրը մասնավորապես եւ նոր հասարակարգին հատուկ դեսությունը կառուցելու ընթացքն ընդհանրապես վկայեցին, որ շատ են բնականոն ճանապարհից խոտորումները: Ի՞նչ ունիներ եւ ի՞նչ լծակներ ունի Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը, իր համար ընտրությունների հաջող ելքի դայմաններում, այդ խոտորումները վերացնելու համար:

– Քաղաքական կազմակերպությունները ու անհատ թեկնածուները ընտրություններին գնում են նախընտրական դրաֆիրմներով, փաստաթղթերով: Կարգախոսների ժամանակը եւ հոգեբանական, եւ քաղաքական իմաստով վաղուց է անցել: Ժողովրդին դեսք է ներկայանալ ոչ թե խոստումներով կամ ներկա իրավիճակի քննադատությունով, այլեւ կոնկրետաբար առանձնով ձեւակերդված. գաղափարախոսության ծանրության կրող փաստաթղթերով: Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը, ինչպես հայտնի է, առաջինն իր նախընտրական դրաֆիրմը ներկայացրեց ժողովրդին: Նախընտրական դրաֆիրմը ծրագիր է, իսկ ցանկացած ծրագիր կոմդրոմիս է տեսությունների եւ համոզմունքների միջեւ: Եթե ես ասիդված լինեի դրաֆիրմը բնութագրել մեկ բառով, կընդգծեի, որ այն իրատեսական է, չի հետաքրքրում զուտ քաղաքական, կարգախոսային նդատակներ: Ինչ վերաբերում է համոզմունքներին, Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության դարագայում, դրանք հիմնված են մի գաղափարախոսության վրա, որը ներառում է ոչ միայն ժողովրդավարական երկրներից շատերի փորձը, այլեւ ամենակարեւորը՝ կուսակցության անցած ուղու, գաղափարական ժառանգության, հայ ժողովրդի անցյալի ու ներկայի վերլուծության արդյունքներ: Որպես կառուցողական ընդդիմադիր կուսակցություն, մենք չենք օգտվել միայն ինքնաբուխ դիրքերից հանդես գալու ընձեռված հնարավորությունից: Քննադատության արժանի երեւույթներ, փաստեր մեր իրականության մեջ, ցավոք ինչքան ուզես: Բայց հիմնական նախ եւ առաջ դեղամիջոց է դեսք, ոչ թե ախտորոշման անվերջ կրկնություն: Մենք փորձել ենք ցույց տալ այն ուղին, որով արժանավայել ու արդիական կյանքի խոստումներն իրականություն կդառնան, ոչ միայն գալիք սերունդների, այլեւ հենց այս սերնդի համար:

Տես էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆ

Խռովություններ Բահրեյնում

ՍԱՆԱՍ, 12 ՀՈՒՆԻՍ, WSJ: Բահրեյն կղզու մայրաքաղաքի փողոցներում 3-րդ օրն է շարունակվում են հրասայլերը, մինչ զինված ուժերի ստորաբաժանումներ դարեկություն են անում երկրի տարբեր շրջաններում: Արդեն մի քանի ամիս է, որ Բահրեյնում սոցիալական դայթուցիկ վիճակ է: Աղքատության մեջ ապրող շիիդ ազգաբնակչությունը խիստ լարված է երկիրը ղեկավարող Ալ Խալիֆա տոհմի ընտանիքի դեմ, որը ընդդատությունները ճնշելու համար զորք է դնում, ինչպես անցնող օրերին, բրիտանացի եւ դակիստանցի վարձկաններից բաղկացած զորքին: Մեծամասնությամբ շիիդ ազգաբնակչությունը դահանջում է ազատություն, ինչպես նաեւ երկրի խորհրդարանի վերահաստատում:

Կոլումբիա. Ձերբակալվեց թմրեցուցիչների հայտի մասնակիցը

ԳԱԼԻ, 12 ՀՈՒՆԻՍ, WSJ: Կոլումբիայի թմրանյութերի սարսափազդու մաֆիայի ղեկավարներից Ջիլբերտո Ռոդրիգեզ Օրիխուելան վերջապես ձերբակալվեց ոստիկանության կողմից: Տեղի իշխանությունները նրա կալանավորությունը համարում են մեծ հաջողություն թմրամասնենգության ցանցի դեմ դայքարի գործում: Այս կողմից, Կոլումբիայի Մեդելլին քաղաքում շաբաթ օրը դայթեց ռումբ, որի հետեւանքով սպանվեց 28 մարդ եւ վիրավորվեց ավելի քան 200 հոգի:

Վեհափառը ժամանեց Մոսկվա

ԼՈՒՍԻԿ ՂԱՐԻԱՍՅԱՆ,

Մեր սեփ. թղթ. Մոսկվա

Երկուշաբթի օրը, ժամը 17-ին հատուկ չվերթով Մոսկվա ժամանեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ն, որին ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Երեւիսյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ եպս. Մարտիրոսյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր, Աստղիկ եպս. Արիստակեսյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռաֆայել Պատրյանը, կրոնի գործերի դետական խորհրդի նախագահ Լազար Սուքիասյանը: «Վնուկովո» օդանավակայանում Գարեգին Ա Վեհափառին դիմավորեցին Մոսկվայի եւ համայն Ռուսիո դատրիարք Ալեքսիյ 2-րդը, «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրեն Սամուել Պետրոսյանը, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Տիրան արք. Կյուրեղյանը, Ռուսաստանում Հայաստանի դեսպան Յուրի Մկրտումյանը դեսպանատան մեկ տասնյակից ավելի ատաշեակիցների ու մեքենաների ուղեկցությամբ: Այսուհետ, Ս. Գանիելի վանքում տեղի ունեցավ Գարեգին Ա-ի եւ Ալեքսիյ 2-րդի դատվերական հանդիպում: Այցի ընթացքում, որը կշարունակվի մինչեւ հունիսի 16-ը, վաղը նախատեսվում է եռակողմ հանդիպում Գարեգին Ա-ի, Ալեքսիյ 2-րդի եւ Անդրկովկասի գլխավոր մուֆտի եւ Ադրբեջանի Շեյխ ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի միջեւ: Նաեւ խոստանում է նաեւ Գարեգին Ա-ի հանդիպումներ Մոսկվայի հայ համայնքի ներկայացուցիչների, դետական այլ բարձրաստիճան դատվերաների հետ, ինչպես նաեւ կկազմակերպվեն ընդունելություններ Ալեքսիյ 2-րդի աթոռանիստում եւ «Մետրոդոլ» հյուրանոցում ի դատիվ Վեհափառի այցելության: ■

Ազգային դաշինք-Դաշնակցությունը . բողոքարկել է ԿԸՀ-ի որոշումը

«Հայաստանի իշխանությունները ցանկանում են կեղծիքների եւ ուժային ճնշման միջոցով քաղաքական ասպարեզից հեռացնել իրենց ախոյաններին եւ նույն մեթոդներով անցկացնել դիկտատորական սահմանադրությունը», այս հայտարարությամբ «Ազգային դաշինք-Դաշնակցություն» ընտրական միավորման անունից ՀՀ Գխ դատգամավորներ Հրանտ Խաչատրյանն ու Իգոր Մուրադյանը դիմել են ՀՀ ՄԱԿ-ի ներկայացուցչությանը: Հայաստանում գտնվող արտասահմանյան երկրների դեսպանատներին, միջազգային դիտորդ կազմակերպություններին եւ Հայաստանում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին: ԱԻՄ-ի գրասենյակում երեկ հրավիրված մամուլի ասուլիսի մասնակից հրամբ հայտարարեցին, թե հուլիսի 9-ին ԿԸՀ-ն իր նիստում կեղծ եւ շինծու վաստակի հիման վրա մերժեց «Ազգային դաշինք-Դաշնակցություն» ընտրական միավորման գրանցումը, որն բաս անկախ հարցումների ունի բնակչության 25-28 տոկոսի աջակցություն եւ ընտրություններին ստանալիք 50 տոկոս մասնակցության դայմաններում կարող էր այդ միավորմանը բերել 50 տոկոսից ավելի ընտրողների ձայներ: Ընդ որում, բաս իրենց տեղեկություններ մի քանի օր առաջ ՀՀ Անվտանգության խորհրդի նիստում հնչարկվել է «Ազգային դաշինք-Դաշնակցություն» միավորմանը ընտրադայքարից հանելու հարցը:

Տես էջ 2

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՇԱԲԱԹՎԱ 7 ՕՐ

13 կուսակցություններ կպայքարեն 40 մանդատի համար

Օրինախախտումներ ու կամայականություններ ընտրատարածքներում

Անցնող շաբաթ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների գրանցման բոլոր օրեր էին: Համամասնական ընտրակարգով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրություններին մասնակցելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գրանցեց 11 կուսակցություն եւ երկու միավորում: Գրանցման գործընթացն իսկապես հեզաստան չընթացավ եւ ԿԸՀ-ում մեծամասնության քվեարկության մեխանիզմը գործեց ըստ անհրաժեշտության: «Հանրապետություն» բլոկի, ՀՌԱԿ-ի, Կոմկուսի, ԳԻՄԴԲՄ-ի, ԱԻՄՔ-ի եւ «Կամք ազատություն» նորահայտ կազմակերպության հանգիստ գրանցումից հետո, հունիսի 7-ին ԿԸՀ-ն մերժել էր գրանցել «Ազգային առաջադիմություն» կազմակերպությանը, ինչը տեղիք էր տվել բնդհարման ու քաշքշուկի: Երկու օր անց, բաների համար անակնկալորեն ԿԸՀ-ն վիճաբանություններին ու լարվածության մթնոլորտում չէր գրանցել նաեւ «Ազգային դաշինք-դաշնակցություն» միավորմանը: Եվ այսպես, Հայաստանի Հանրապետության առաջին բազմակուսակցական խորհրդարանական հանրընտրություններում մասնակցելու իրավունք ստացած 13 քաղաքական կազմակերպություններ համամասնական ընտրակարգով հունիսի 5-ին կպայքարեն 40 մանդատի համար: ՀՌԱԿ-ից եւ դեմոկրատական կուսակցությունից հետո հունիսի 8-ին իր նախընտրական ծրագիրը ներկայացրեց նաեւ «Հանրապետություն» բլոկը, որի Ազգային օրենքի եւ բալետի բաշխումն ստացած խորհրդակցությունում իշխում էր ինքնավստահության ու վճռականության մթնոլորտը: Խորհրդակցությունը եզրափակել էր Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որ հավանում էր հայտնել, որ հինգ տարի իշխանությունն իրենց ուսերին կրած ուժերը հանում մեր ազգի ու պետության, պարտավոր են եւս հինգ տարի կրել այդ պատասխանատվությունը: Հանրապետության նախագահը չէր վարանել հայտնելու, որ դահլիճում ներկա են աղագա Ազգային ժողովի պատգամավորների 80 տոկոսը: Մեր կարծիքով հանրապետության նախագահը պետք է խոսափեր աղագա խորհրդարանում քաղաքական ուժերի տոկոսային հարաբերությունը ճշտելուց, այլ պետք է ընտրեր իր իսկ կողմից բազմիցս մատնանշված օրենսդիր իշխանության շարունակության ապահովման առաջնահերթությունը: «Հանրապետություն» բլոկի նախընտրական պլատֆորմը ներկայացրեց Է. Եգորյանը, սակայն պարզ չեղավ, թե դա արդյոք բլոկի մասնակից քաղաքական ուժերի միջեւ կոմպրոմիսի արդյունք է, թե՞ կառավարությունում գրի առնված մտադրությունների արձանագրություն:

Նախընտրական արշավի ու մեծամասնական թե համամասնական ընտրակարգով թեկնածուների գրանցման ժամկետի ավարտի հետ կապված, քաղաքական լարվածությունը խոստանում է անցնել բույսերի քննության, հաստատակ ժողովրդի համար ոչ այնքան կարեւոր է, թե որ քաղաքական գործիչներ կգան իշխանության, որքան թե ինչպես նրանք կբարեփոխեն իրենց կյանքը: Ահա հիմքերի հիմքը: Ես կարծում եմ եւ հույս ունեմ, որ ընտրություններում կհաղթի Բաբկեն Արարքցյանի գլխավորած ցուցակը: Եթե դրանում ընդգրկվածների մեծամասնությունը հաղթանակի, գտնում եմ, որ Հայաստանում ավելի լավ կլինի»: Համաձայնենք, որ Շուշեյկոյի հայտարարությունը չի փայլում իր կուռ տրամաբանությամբ ու միջոցեսկան հարաբերությունների էթիկայի պահպանմամբ: Իսկ ի՞նչ է ասում իրեն լիբերալ դեմոկրատ հռչակած պարոն Ժիրինովսկին: Նա հայ ժողովրդին կոչ է անում ձայնը տալ «Ազգային դաշինք-Դաշնակցությանը», որը «բուն ազգային գաղափարախոսության կրողն է. հայ ժողովրդի արմատական շահերի առավել նվիրական հույսերի արտահայտողը»:

Անցնող շաբաթ հայ հարավսլավական հարաբերություններ նոր փուլ թեւակոխեցին, երբ Երեւան այցելեց Հարավսլավիայի Դաշնակցային Հանրապետության արտգործնախարար Վլադիսլավ Յանովիչը, որը բանակցություններ վարեց իր հայ պատասխանակցի հետ: Յանովիչը եւ Վահան Փափազյանը նշեցին, որ երկու երկրներ որոշել են միջազգային տարբեր կազմակերպություններում համագործակցել միմյանց հետ եւ մինչեւ տարեվերջ Երեւանում եւ Բելգրադում բացել երկու երկրների դեսպանություններ:

Կարեւոր իրադարձություն էր անցուցաց Մ. Նախիջեւանի Սենատի արտաքին կապերի հանձնաժողովի հունիսի 7-ի որոշումը, որով արգելվում է Թուրքիային օգնություն ցույց տալ, եթե այդ երկիրը խոչընդոտի Հայաստանին տվող մարդասիրական օգնության հանձնմանը: Նման որոշում ընդունել էր նաեւ Ներկայացուցիչների տունը: Քաղաքական դիտորդների ուշադրությունից չվրիպեց հունիսի 4-ին, ավելի քան 15 տարվա ընթացքում առաջին անգամ տիրոջ ունեցած երկար ժամանակ հակամարտությունների մեջ գտնվող սիյամոհայ նախկին ազատամարտիկների ու վիրավորների ոչ պաշտոնական եւ խորհրդանշական հանդիպումը Ս. Էջմիածնում:

ՀՈՒԱԿ ՅՈՐԴԵԿՅԱՆ

ՀԱՄԵՆԱՅՆԴԵՊՍ

«Հեղինակային իրավունքի» անկոչ պաշտպանները

Ամերիկյան ժողովրդավարության հայրերից՝ նախագահ Աբրահամ Լինկոլնը գերեզմանում ուրախությունից երեւի շուռ կգար, եթե ի վիճակի լիներ իմանալու, որ հեռավոր Հայաստանում (իր կենդանության ժամանակ՝ հեռամնաց Թուրքական եւ Ռուսական կայսրությունների ու Պարսկաստանի արանքում կորած մոլորած մի աշխարհագրական շրջան եւ վասալ մի ժողովուրդ), իրենից շուրջ 150 տարի հետո, հայկական մի հասարակություն՝ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցություն անունով, կարգախոս հավատամքի է վերածել իր հայենի ասույթը՝ «Ժողովրդավարությունը ժողովրդի իշխանությունն է ժողովրդի միջոցով եւ ժողովրդի համար»: Բայց ավելի մեծ պիտի լիներ նրա զարմանքը, ու երեւի երկու անգամ շուռ գար գերեզմանում, եթե իմանար, որ ինչ-որ մեկը՝ Գ. Կարապետյան անունով, «Հայաստանի Հանրապետութիւն» կոչվող «պետական» պաշտոնաթերթի հունիսի 10-ի համարում «Գերազնիվ կարգախոսի անազնիվ սեփականաշնորհում» վերնագրի ներքո իր անունից հեղինակային իրավունք է պահանջում նույն այդ կուսակցությունից՝ **ժողովրդից, ժողովրդով, ժողովրդի համար** կարգախոսի օգտագործման համար:

Բոլոր մրցանիշները կտրած, սահման չճանաչող այդ անհեթեթությունն անկարելի է բացատրել: Այն կարելի է միայն համեմատել, ասենք, ինչ որ մի նախամարդու փոխարեն այժմ աշխարհի բոլոր պետություններից ու ժողովուրդներից կրակի օգտագործման կամ անիվ սարքելու համար... հեղինակային իրավունք պահանջելու հետ:

Ընտրական եւ ոչ ընտրական նոպատակներով այս օրերին Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության եւ «Ազգ» օրաթերթի դեմ սանձազերծված «պետական» արշավը, Մեծ դիրիժորից իջեցված հրահանգով, այնքան է խանդավառել մի խումբ մարդկանց ոգեւորությունը, որ վերջինները այլեւս չեն տեսնում անհեթեթության սահմանները: Նրանց տեսողության կորուստին ավելացել է նաեւ հիշողության կորուստը, եւ նրանք չեն կարողանում անգամ հիշել, թե Ռամկավար ազատական կուսակցությունը, ինչպես ռամկավար եւ ազատական ուղղության բազմաթիվ կուսակցություններ աշխարհում, նախագահ Լինկոլնից հետո տասնամյակներ շարունակ օգտագործում են այդ միեւնույն կարգախոսը, որը Սփյուռքից Հայրենիք է բերվել եւ առաջին անգամ այստեղ օգտագործվել 1991 թ. հոկտեմբերին, երբ Երեւանի օդերայի եւ բալետի բաշխումն ՀՌԱԿ-ը տնում էր ՌԱԿ-ի հիմնադրման 70 ամյակը, որին, ի դեպ, մասնակցում էր նաեւ Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը:

Գուցե նույն մարդկանց համար երկար ժամանակ է 4-5 տարին: Բայց զարմանալի է, որ այդ մարդիկ չեն հիշում անգամ 4-5 ամիս առաջ Ֆրանսիայում կատարվածը, երբ նախագահական ընտրությունից դուրս մրցակից երկու հզոր կազմակերպությունները՝ սոցիալիստներն ու գոլիստները ընտրել էին նույն՝ «Իսկական փոփոխություն» գլխավոր կարգախոսը, որի համար ոչ Լիոնել Ժոսպենը եւ ոչ էլ Ժակ Շիրակը իրարից հեղինակային իրավունք չէին պահանջում:

Երեւի 4-5 ամիսն էլ է երկար այդ մարդկանց բացած հիշողության համար: Գոնե հիշեին 4-5 օրվա «բարության» ՀՀՇ-ական կարգախոսը՝ «Ազատություն, պետություն, բարորություն», որը հազարավոր անգամներ օգտագործվել է աշխարհի բազմաթիվ երկրներում բազմաթիվ կուսակցությունների կողմից եւ, կարծում ենք, որպես միջազգային օգնություն կամ վարկ չի բերվել Հայաստան...

Համենայնդեպս, ինչպես մեզ տեղեկացրին Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության կենտրոնական գրասենյակից, լրջորեն ենթակելով «պետական» պաշտոնաթերթում Գ. Կարապետյանի՝ հեղինակային իրավունքի պաշտպանության նկատմամբ ցուցաբերած նախանձախնդրությունը, հույս են հայտնում եւ հարց տալիս, թե նույն հեղինակը նույն թերթում եւ նույն ոգեւորությամբ արդյո՞ք կպաշտպանի իր 74 տարվա անվան նկատմամբ ՌԱԿ-ի ունեցած հեղինակային իրավունքը, որ 73 տարի հետո, յուսի Տեառն 1994-ին, օրը ցերեկով, ՀՀՇ-ի կարգադրությամբ եւ ՀՀ արդարադատության նախարարության ձեռքով գողացվեց իր օրինական ու պատմական տիրոջից ու տրվեց իրեն «Ռամկավար ազատական (լիբերալ դեմոկրատական) կուսակցություն» հռչակած խմբակին:

Զո՞ւր հույսեր:

Հ. Ա.

ԱՆՅՈՒՊԱՐԶ

Մսարֆ եւ Փասս գործակալությունները հերքում են

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈՒՆԻՍ, ՄՆԱՐՔ: «Հայաստանի Հանրապետութիւն» թերթի հունիսի 10-ի համարում հրապարակված է Ա. Ներսիսյանի նյութը, որտեղ ներկայացված է «Ազգ» թերթի հաստվելությունը «Հանրապետություն» միավորման նախընտրական խորհրդակցության վերաբերյալ: Հեղինակի պնդման համաձայն, հաստվելությունը կազմված է այդ միջոցառմանն իբր ներկա չգտնված Սնարֆ եւ Փասս գործակալությունների թղթակիցների նյութերի հիման վրա:

Հարգելի Ա. Ներսիսյանին հայտնում ենք, որ միավորման խորհրդակցության դահլիճում էին գտնվում Սնարֆի երկու աշխատակցուհիներ Մարինե Մկրտչյանը եւ Գայանե Մովսիսյանը, որոնք, ի դեպ, լավ հայերեն են իրենց լրագրող գործընկերներին: Պատիվ չունենալով ծանոթ լինել պրն Ներսիսյանի հետ, մեր հերթին կուզենայինք հարցնել, թե նա ինչի՞ հիման վրա է Սնարֆի տեղեկատվությունից առնված հաղվածները հեգնաբար որակում որպես «տեղեկություններ»:

Թղթակիցներին նկատել կամ չնկատելը պարոն Ներսիսյանի անձնական գործն է: Բայց մասնագիտական անբարեխղճության դրսեւորումը հագիվ թե հնարավոր լինի բույլատրելի համարել:

Իր հերթին Փասս գործակալությունը լրացնում է. Դժվար է ասել, թե պարոն կամ տիկին Ներսիսյանն ինչպես է կարողացել որոշել, թե ովքեր են ներկա Օդերային բաշտոնի դահլիճում, սակայն սխալված ենք հայտարարել, որ Փասսի թղթակիցն առանց խոչընդոտների հանդիպել ու մասնակցել է Դահլիճի խորհրդակցությանը եւ գործակալությունն էլ սովորություն չունի գուշակություններով զբաղվելու:

ՌԱՍԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակություն է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (7 8852) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագրի տեղակալ
ԱԱՎԵԼ ԴԻԱՆԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՍՍՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային
ծառայություն / 581841
Ոճը եւ տառաձեւերը ՊԱՌԵԼ ԴԱԼԼԱԲԵՍԻՆ
Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ

«Ազգային դաշինք-Դաշնակցությունը» բողոքարկել է ...

Սկիզբը էջ 1

Հրանտ Խաչատրյանը նշեց, թե մրցապարեզից հանելով Դաշինքին, ըստ օրենքի միայն 150 օկրուգային եւ 1600 տեղամասային հանձնաժողովներից դուրս կբերվեն մոտ 7000 տեղամասային եւ օկրուգային հանձնաժողովների «Ազգային դաշինք-Դաշնակցությունը» ներկայացրած անդամներ, որից հետո իշխանությունները բացարձակ մեծամասնություն կկազմեն հանձնաժողովներում, եւ հնարավորություն կստանան ընտրական կեղծիքներ ողարկելով անցկացնել վարչախմբի պատգամավորության թեկնածուներին եւ Սահմանադրությունը:

Ելնելով վերոհիշյալից, Դաշինքը Արարքիի շրջանի ժողովտարանում օրենքով սահմանված կարգով բողոքարկել եւ վերականգնել է միավորման ընտրական ցուցակով ներկայացված 30 պատգամավորության թեկնածուների իրավունքը: Ընդ որում, դատարանում պատասխանել են, թե «վաղը կասանք ընթացք չտալու մասին որոշում»: Հրանտ Խաչատրյանի ասելով, դատարանը պահանջում էր ԿԸՀ-ի կողմից կայացրած որոշման թերթիկը, մինչդեռ դա պետք է պահանջվեր ԿԸՀ-ից: Հրանտ Խաչատրյանը նշեց նաեւ, որ ԿԸՀ-ի կողմից կազմված ենթահանձնաժողովն ընդամենը 115 կեղծ ստորագրություն էր հայտնաբերել, որը գիջում էր 300-ին, որի դեպքում միայն միավորումը կգրկվեր գրանցումից: Բացի այդ, Դաշինքը նախապես իմանալով իրենց նկատմամբ ծրագրվելիք քաղաքականությունը, խիստ փորձագիտական ուսումնասիրության էր ենթարկել բոլոր ստորագրությունները, եւ մոտ 500-ից ավելի ստորագրություն հանվել էր ԿԸՀ-ին ներ կայացնելուց առաջ: Ինչ վերաբերում է ԿԸՀ-ի անդամ Սերգեյ Պողոսյանի կողմից 363 անվավեր ստորագրությունների առկայության մասին հայտարարությանը, ապա ոչ նա, ոչ էլ հանձնաժողովի որեւէ անդամ մինչեւ օրս ոչ ցույց է տվել այդ ստորագրությունները, ոչ փաստակված աղացուցել, ոչ էլ լուրջ փորձաքննության ենթարկել: Իգոր Մուրադյանի ասելով, Դաշինքի արգելումը նախեւառաջ ազգային հայրենասիրական գաղափարախոսության արգելումն է, քանի որ Դաշինքն ըստ էության ներկայացնում էր ազգային արմատականությունն ու ազգային պահպանողականությունը: Իգոր Մուրադյանը նշեց, թե այժմ Հայաստանում հաստատվել է լիբերալ ամբողջատիրական ռեժիմ, որ երկիրը ղեկավարում է ոչ թե Լեւոն Տեր-Պետրոսյանը, այլ ԱՄՆ դեսպան Հարրի Գիլմորը, որի հաղթականությունը սրբագրում է Ռուսաստանի դեսպանը: Ի դեպ, Իգոր Մուրադյանը դա դյուրանվանեց նոր աշխարհակարգի բաժանմամբ, ինչին լծված են միջազգային ուժերը: «Արցախ-Հայաստան» միության անունից խոսեց Լենսեր Աղալովյանը, որը հայտարարեց, թե ՀՀՇ-ն ոչ մի կաղ չի ունեցել դարաբաղյան շարժման հետ, որ նրա առաջնորդները 1990-91 թթ. տանում էին պարտվողական հաղթականություն եւ միայն ընդդիմության ճնշման, ազատամարտիկների անձնազոհության եւ Արցախի բույլ տված դիվանագիտական բացթողումների պատճառով հնարավոր եղավ Դարաբաղը պահպանել:

Վերջում Հրանտ Խաչատրյանը հիշեցրեց, որ «Հանրապետություն» ընտրական միավորման ցուցակներում կասկածելի ստորագրությունների թիվը հասել է 1400-ի, սակայն հանձնաժողովի անդամների մի հանիսի այն պնդումները դրանք ստուգելու մասին, անտեսվել են եւ ձայների մեծամասնությամբ ընդունվել է բլոկի ցուցակը:

ԼԼ. Հ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

Սկիզբը էջ 1

Վերջին հինգ տարիներ նշանավոր վեցին հայոց պետականության. երրորդ հանրապետության հաղթական հիմքերի ստեղծմամբ, եւ նույնիսկ դեռեւս գործող Գերագույն խորհուրդը հասցրեց մեկ երկու ամսաշրջան դնել, եւ կատարված աշխատանքից է կախված, թե ինչպիսին կլինի մեր ազգային տունը: Ստիպված կլինե՞նք արդյոք մեզանից հետո եկողները նորից հիմքից սկսել, թե կշարունակեն սկսված աշխատանքը:

Խնդիրն այնքան էլ դարգունակ չէ. խոսքը գնում է այն մասին, թե ի՞նչ ճանապարհով կգնա պետության ընթացքը Հայաստանում: Հենց «պետության կողմնակիցների» եւ «պետության հակառակորդների»: Պատնեշներ են կառուցվում, տեղաբաշխվում են ուժերը ... Հետո ... Այսինքն ընդգծվում է այն միտքը, որ իբր թե կա ընդամենը մի քաղաքական ուժ, որը եգիպտական բուրմների հանգիստ տիրապետում է պետություն կերտելու էքստերիկ գիտության գաղտնիքներին: Կարելի է դարգադեղ ժպտալ եւ անցնել առաջ, բայց խնդիրը եւ իրավիճակը կրում են կայացող պետականության եւ կայացող նոր հասարակության համար մի վտանգ. ժողովրդավարությունը նշանակում է ոչ միայն շահերի, կարծիքների, մոտեցումների բազմազանություն, այլ նաեւ հանդուրժողականություն, համաձայնեցնելիություն: Ժողովրդավարությունն նշանակում է ոչ թե վերացնել տարբերությունները, այլ կառավարել նրանց: Իշխե՞լ, թե՞ կառավարել ... Այս խնդրին մեր մոտեցումից է կախված, թե ինչպիսի հասարակություն կունենանք կոնֆլիկտային՞ն, թե՞ կոնսենսուսային: Կոնֆլիկտային հասարակությունում ոչ մի համագործակցություն «կեղծ ճշմարտություններ կրողների» հետ չի կարող լինել: Այս դեպքում հասարակությունը բարոյական ինքնազրկման, նույնիսկ կտրվածության հասնելու միակ իրական ուժը կարող է լինել բռնությունը: որն անվերջ է, ինչպես ճանապարհը անանգաստում, որովհետեւ միշտ նոր բռնություն է ծնում: Եվ այսօր գործնական չեն հարցում այն հնարավոր գործիքների պեղումները, որոնք իբր թե խենթ գաղափարախոսությունը գտնում են հանուն պետականության կայացման: Ես կասեի ընդհանրապես, նրանք հավատարիմ են իրենց սոցիալական գաղափարախոսությանը. որտեղ պետությունն է գերիշխողը, դարգադեղ նրանք իրենց սոցիալական հնարավորությունը որոշ. ժամանակով հետաձգում են: Ի՞նչ արեցին, որեւէ հեղափոխության հետաձգումն էլ է գնահատելի բայց: Ինչ վերաբերում է Ռամկավար Ազատական կուսակցությանը, մեզ համար պետությունն իմաստավորված չէ: Պետությունն է ժողովրդի համար, այլ ոչ թե ժողովուրդը պետության: Մեր նպատակն է կառուցել անկախ ազգային պետություն, որի քաղաքացիներն ազատ մարդիկ են: Միայն այդպիսի ժողովրդավարական պետությունը կարող է լինել ուժեղ եւ միայն ուժեղ պետությունը կարող է իրագործել մեր ազգային ճիգերական խնդիրները տնտեսական, քաղաքական, մշակութային, հոգեբանական ասպարեզներում:

– Ժողովրդի որոշ խավերի մեջ իշխում է այն տրամադրությունը, որ ոչ լավ է ունենալ վատ սահմանադրություն, քան թե չունենալ ոչինչ: Իսկ Ձեր կարծիքո՞վ ...

– Լավ է ունենալ... լավ սահմանադրություն: Ինձ խիստ մտահոգում է մի հանգամանք եւս: Պատմական քարոզչությունում Սահմանադրությունը կարծես թե դիտվում է ոչ թե որպես երկրի Հիմնական օրենք, այլ սոսկ որպես պետականության խորհրդանիշներից մեկը, ինչպես դրոշը, զինանշանը, եւ նույնիսկ կոչ է արվում «մեկ շնչով» այն ընդունել: Այսինքն եթե մենք ուզում ենք ունենալ անկախ պետություն, պետք է ունենանք նաեւ Սահմանադրություն: Փաստորեն բովանդակալից քննարկում տեղի չի ունենում: Նույն ճանապարհով եւ նույն մեթոդաբանությամբ ընդդիմության մի մասը «ոչ» է ասում Սահմանադրությանը: Կարծես թե եւ Սահմանադրության ջատագովներ, եւ փնովողներ ջանում են առաջացնել լիբիական հեղափոխության առաջնորդ Մուամմար Կադդաֆիի խոսքերը. «Հանրամվեն ժողովրդավարության նենգափոխումն է. որովհետեւ նրանք, ովքեր «այո» են ասում եւ նրանք, ովքեր «ոչ», իրականում արտահայտում են ոչ թե իրենց կամքը, այլ ղարգադեղ լռության են դատապարտված»: «Ոչ» ասողը պետք է հնարավորություն ունենա հիմնավորել, թե ինչու՞ է ասում «ոչ», իսկ «այո» ասողը պետք է բացատրի, թե ինչու՞ է ինքն ասում «այո»: Բայց չէ՞ որ մենք ուզում ենք իրավական, ժողովրդավարական ազգային հասարակություն կառուցել, այլ ոչ թե Ջամահիրիա: Մեր «այոն» կամ «ոչը» պետք է նախօրոք գիտակցված լինեն: Չէ՞ որ Սահմանադրությունը մենք չենք նախատեսել միայն մինչեւ 2000 թվականը:

Ցանկացած սահմանադրություն, քաղ մեզ, նախ եւ առաջ ուրվագծում է խաղաքաղաքական ուժերի հարաբերակցությունն ու հասարակական գիտակցության իրական առիթները: Այնպես որ, եւ կառաջարկեի եւ դրաշնորհական քարոզչական միջոցներին, եւ կուսակցական եւ անկախ մամուլին, մինչեւ հանրաքվեն մնացած ժամանակահատվածը օգտագործել Սահմանադրության նախագծի առարկայական քննարկումը, որպեսզի մենք կարողանանք կոմունիզմի մեր ժառանգին: Չի կարելի բարոյախոսությամբ եւ փիլիսոփայելով ընդունել կամ մերժել պետության Հիմնական օրենքը: Էլ չեմ ասում այն մասին, որ երբ ժողովրդավարությունն սկսում է բարոյախոսել եւ փիլիսոփայել, նա միանգամից դառնում է խաբեություն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«Ինչպիսի՞ կառավարություն՝ իշխո՞ղ, թե՞ կառավարող»...

դափոխակա՞ն, թե՞ էվոլյուցիոն, բեռ վերջինս չի նշանակում կարարեն շարունակել ինչ որ գործերաց: Էվոլյուցիոն ճանապարհն էլ են բարկվում է իր ներքին տրամաբանությանը, այլ ոչ միայն իներցիոն ուժին: Եվ հետո, հեղափոխությունները բավական չեն լինում դա սոսկ մեսաիրա է: Հեղափոխությունից հետո միշտ մվերակներ են մնում, առավազն մարդկանց հոգում: Այդ առումով շատ կարեւոր է հենց այսօր գիտակցել, թե ինչպիսի պետություն ենք մենք ուզում կառուցել: Ուրվիեստ միայն շահագրգիռ հարցերությունները դեռ չեն նշանակում ժողովրդավարության միանշանակ ամրապնդում:

– Ինչպիսին է տեսնում Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը պետության դերը այս հետգիեսի ձեւավորվող եւ մեզ համար նոր համակարգում, որ քաղ այդ համակարգի, պետությունը պիտի որ ծրվի երկրորդ, եւ միգուցե երրորդ պլան:

– Հայաստանի պատմական զարգացումը, ինչպես նախկին Խորհրդային Միության մյուս հանրապետություններինը, ունի մի բախտորոշ առանձնահատկություն: Խնդիրը դնելով անցում կատարել տոտալիտար համակարգից դեպի ոչ լոյալիստական, վարչահրամայականից դեպի ազատական տնտեսություն, միեւնույն ժամանակ գոյություն ունի նաեւ, ես կասեի, մի հակադիր խնդիր: Երբ տոտալիտար հասարակությունում պետությունն է գերիշխողը եւ մարդը անվերապահորեն պիտի ենթարկվի «բարձրագույն պետական շահերին», արդեն ազատական հասարակությունը միշտ հակառակն է նշանակում: այսինքն նրա տարբերն դեպի նվազեցում կայդ մի տարի գալիս է դեռ 18-րդ դարից: Մեզ մոտ այդ գոյ տեսական հակասությունն ավելի է արմատ, քանի որ դարգադեղական քարոզչությունում արդեն սկսել են տարանջատել մարդկանց «դեպության կողմնակիցներ» եւ «պետության հակառակորդներ»: Պատնեշներ են կառուցվում, տեղաբաշխվում են ուժերը ... Հետո ... Այսինքն ընդգծվում է այն միտքը, որ իբր թե կա ընդամենը մի քաղաքական ուժ, որը եգիպտական բուրմների հանգիստ տիրապետում է պետություն կերտելու էքստերիկ գիտության գաղտնիքներին: Կարելի է դարգադեղ ժպտալ եւ անցնել առաջ, բայց խնդիրը եւ իրավիճակը կրում են կայացող պետականության եւ կայացող նոր հասարակության համար մի վտանգ. ժողովրդավարությունը նշանակում է ոչ միայն շահերի, կարծիքների, մոտեցումների բազմազանություն, այլ նաեւ հանդուրժողականություն, համաձայնեցնելիություն: Ժողովրդավարությունն նշանակում է ոչ թե վերացնել տարբերությունները, այլ կառավարել նրանց: Իշխե՞լ, թե՞ կառավարել ... Այս խնդրին մեր մոտեցումից է կախված, թե ինչպիսի հասարակություն կունենանք կոնֆլիկտային՞ն, թե՞ կոնսենսուսային: Կոնֆլիկտային հասարակությունում ոչ մի համագործակցություն «կեղծ ճշմարտություններ կրողների» հետ չի կարող լինել: Այս դեպքում հասարակությունը բարոյական ինքնազրկման, նույնիսկ կտրվածության հասնելու միակ իրական ուժը կարող է լինել բռնությունը: որն անվերջ է, ինչպես ճանապարհը անանգաստում, որովհետեւ միշտ նոր բռնություն է ծնում: Եվ այսօր գործնական չեն հարցում այն հնարավոր գործիքների պեղումները, որոնք իբր թե խենթ գաղափարախոսությանը գտնում են հանուն պետականության կայացման: Ես կասեի ընդհանրապես, նրանք հավատարիմ են իրենց սոցիալական գաղափարախոսությանը. որտեղ պետությունն է գերիշխողը, դարգադեղ նրանք իրենց սոցիալական հնարավորությունը որոշ. ժամանակով հետաձգում են: Ի՞նչ արեցին, որեւէ հեղափոխության հետաձգումն էլ է գնահատելի բայց: Ինչ վերաբերում է Ռամկավար Ազատական կուսակցությանը, մեզ համար պետությունն իմաստավորված չէ: Պետությունն է ժողովրդի համար, այլ ոչ թե ժողովուրդը պետության: Մեր նպատակն է կառուցել անկախ ազգային պետություն, որի քաղաքացիներն ազատ մարդիկ են: Միայն այդպիսի ժողովրդավարական պետությունը կարող է լինել ուժեղ եւ միայն ուժեղ պետությունը կարող է իրագործել մեր ազգային ճիգերական խնդիրները տնտեսական, քաղաքական, մշակութային, հոգեբանական ասպարեզներում:

– Ժողովրդի որոշ խավերի մեջ իշխում է այն տրամադրությունը, որ ոչ լավ է ունենալ վատ սահմանադրություն, քան թե չունենալ ոչինչ: Իսկ Ձեր կարծիքո՞վ ...

– Լավ է ունենալ... լավ սահմանադրություն: Ինձ խիստ մտահոգում է մի հանգամանք եւս: Պատմական քարոզչությունում Սահմանադրությունը կարծես թե դիտվում է ոչ թե որպես երկրի Հիմնական օրենք, այլ սոսկ որպես պետականության խորհրդանիշներից մեկը, ինչպես դրոշը, զինանշանը, եւ նույնիսկ կոչ է արվում «մեկ շնչով» այն ընդունել: Այսինքն եթե մենք ուզում ենք ունենալ անկախ պետություն, պետք է ունենանք նաեւ Սահմանադրություն: Փաստորեն բովանդակալից քննարկում տեղի չի ունենում: Նույն ճանապարհով եւ նույն մեթոդաբանությամբ ընդդիմության մի մասը «ոչ» է ասում Սահմանադրությանը: Կարծես թե եւ Սահմանադրության ջատագովներ, եւ փնովողներ ջանում են առաջացնել լիբիական հեղափոխության առաջնորդ Մուամմար Կադդաֆիի խոսքերը. «Հանրամվեն ժողովրդավարության նենգափոխումն է. որովհետեւ նրանք, ովքեր «այո» են ասում եւ նրանք, ովքեր «ոչ», իրականում արտահայտում են ոչ թե իրենց կամքը, այլ դարգադեղ լռության են դատապարտված»: «Ոչ» ասողը պետք է հնարավորություն ունենա հիմնավորել, թե ինչու՞ է ասում «ոչ», իսկ «այո» ասողը պետք է բացատրի, թե ինչու՞ է ինքն ասում «այո»: Բայց չէ՞ որ մենք ուզում ենք իրավական, ժողովրդավարական ազգային հասարակություն կառուցել, այլ ոչ թե Ջամահիրիա: Մեր «այոն» կամ «ոչը» պետք է նախօրոք գիտակցված լինեն: Չէ՞ որ Սահմանադրությունը մենք չենք նախատեսել միայն մինչեւ 2000 թվականը:

Ցանկացած սահմանադրություն, քաղ մեզ, նախ եւ առաջ ուրվագծում է խաղաքաղաքական ուժերի հարաբերակցությունն ու հասարակական գիտակցության իրական առիթները: Այնպես որ, եւ կառաջարկեի եւ դրաշնորհական քարոզչական միջոցներին, եւ կուսակցական եւ անկախ մամուլին, մինչեւ հանրաքվեն մնացած ժամանակահատվածը օգտագործել Սահմանադրության նախագծի առարկայական քննարկումը, որպեսզի մենք կարողանանք կոմունիզմի մեր ժառանգին: Չի կարելի բարոյախոսությամբ եւ փիլիսոփայելով ընդունել կամ մերժել պետության Հիմնական օրենքը: Էլ չեմ ասում այն մասին, որ երբ ժողովրդավարությունն սկսում է բարոյախոսել եւ փիլիսոփայել, նա միանգամից դառնում է խաբեություն:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հանրահավաք եւ կրակոցներ Գյումրիում

Ուրբաթ երեկոյան ԱԺՄ Գյումրիի քաղաքային կազմակերպության հրավիրած հանրահավաքին ներկա բազմության մեջ շատ էին վարչական մարմինների անհամազգեստ եւ համազգեստով աշխատողները, որը երեւի ինքնին հասկանալի է հանրահանրապետական կարգի պահպանման [illegible] տեսակետից: [illegible] հանրահանգիստ մարմիններում դեպքերի [illegible] հանրահավաքին [illegible] հետո, առաջին հերթին ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանի ելույթի վերջնամասում ժողովրդի ոգեւորմանի կողմից կրակոցի ձայներ լսվեցին: Եղավ երեւի 4-5 կրակոց: Դժվար է ասել, թե ով էր կրակողը, [illegible] ողողությամբ, եւ դա հաստատի հնարավոր ընթացքի վրա տեսանելի հետք չթողեց, բայց ինչ անց ելույթի համար մոտենալով բարձրախոսին, ՀՀ ԳԽ դաշտամասնակ, միկիցիայի գնդապետ Լեւոն Դաղբաշյանը նախ դիմեց ՆԳ աշխատակիցներին հիշեցնելով, որ ժողովրդի միջավայրում կրակել չի կարելի: Կատարվածից հետո զինվոր եզրակացություններ անել չանելը դրա սխալ հարեւերի գործն է, բայց օրինակությունի շահերն անշուշտ [illegible] հարում են: [illegible] ժամանակ հարցերն [illegible] դաշտագրելու եւ մեղադրելու [illegible] հասարակությունն [illegible] ներն անողորմ [illegible] դաշտային:

Հանրահավաքում ելույթներ ունեցան նաեւ ԱԺՄ փարեզների անդամ Արա Հարությունյանը, նույն վարչության անդամներ, ԳԽ դաշտամասնակներ Մեյրան Ավետիսյանը, Արշակ Մաղդասյանը: Վազգեն Մանուկյանն իր ելույթի սկզբում նշեց, թե այս հանրահավաքին նախաձեռնությունը գաղափարի, այլ ոչ թե ԱԺՄ-ի: Ինչպես նաեւ ասաց, ինքը ոչ մի մեղադրանք չունի ոչ մի կուսակցության հասցեներով

ԱԶԳ

ԱՌՈՒՅԱՌԱԾ

«Կարիքը ստիպում է նոր հնարների մասին մտածել», գրում է նա, ավելացնելով, որ Էներգիայի ներկա ճգնաժամի դրսևորումներում, մարդիկ դեռևս հնարամտորեն դիմում է փոքր գեներատորների և նույնիսկ ավտոմեքենաների մարտկոցների օգտագործմանը հեռուստացույց դիտելու և այլ ծառայություններից օգտվելու համար:

Պատմության մեջ առաջին անգամ է, այնուհետև շարունակում է բողոքիցն իր ծավալուն հոդվածը, որ հայերն իրենց ճակատագրի տերն են, ստեղծել են իրենց սեփական ոլորտները, բեկուզ այն լինի մի չնչին մասն իրենց նախկին հզոր սեփականության սահ ու վանմամբ կազմակերպելու: Սա մեծ խրան է հանդիսացել տնտեսական այլ բարեփոխումների համար: Մինչդեռ որիշ հնարադեպություններում, ներառյալ Ռուսաստանում, այս հարցի դանդաղումը մեծապես խոչընդոտել է բարեփոխումների ընթացքին, առավել ուժեղացնելով բնդդիմադիրների հակառեֆորմիստական բեռը:

«Էներգետիկ ճգնաժամի և շրջափակման ամենադժվար ժամանակներում մենք սովից փրկվեցինք շնորհիվ հողի սեփականաշնորհման», ասում է դրն. Առաստյանը: Մյուս ձեռքերումը» ճիշտ է գուցեն դարատարված էր, սակայն նույնպես հաջող ընթացք ունեցավ: Երբ 1993 թվի սեպտեմբերին Ռուսաստանը մյուս հանդուգնությունները դուրս վանեց «ռուբլու գոտուց», Հայաստանը ստիպված եղավ շրջանառության մեջ դնել իր սեփական փողը դրամը, որն իր սկզբնական երեքուն վիճակից այժմ դարձել է բավական կայուն: Նույնքան կարևոր ձեռքբերում էր նաև արժեզրկման դեմ մղված հաջող դայքարը: Անցյալ տարվա առաջին եռամսյակի ամսական 46 տոկոսի հետ համեմատած այս տարվա մարտին այն կազմում էր ընդամենը 1-2 տոկոս: Նույնիսկ նավթի դաբարներով հարուստ Ռուսաստանի համար, որն այս տարվա առաջին ամիսներին դեռևս դայքարում էր ամսական 18 տոկոսի հասնող արժեզրկման դեմ, Երևանի ձեռքբերումը դեռևս անհասանելի երազանք է:

Միակ բացավաղը, որտեղ հայ բարեկարգիչները ետ են մնացել, արդյունաբերական օբյեկտների սեփականաշնորհումն է, որով և նեղությամբ զբաղվում է կառավարությունը:

Այնուամենայնիվ, Հայաստանի նեղին կայունացման հակայական ձեռքբերումները այնքան արժեք չեն ունենա, եթե զգաստացված չլինեն ավելի կարևոր նվաճման, այն է՝ իր դեռևս անկայուն և բնամական հարևանների հետ հարաբերությունների բարելավման հետ: Ինչոնն էլ հնարս լինեն նրա տնտեսագետները, միևնույն է, շատ բանի չեն կարող հասնել, մինչև նրա դարաստանները չկարողանան բանակցությունների միջոցով վերջ դնել տնտեսական շրջափակմանը:

Կառավարության դաբարդյաները հաստատող են գտնում այն, որ հաղթական կացությունը հեռագիտն բարելավվում է:

«Հայաստանը գտնվում է աշխարհաքաղաքական կարևոր հանգամանքների ունեցող տարածքում: Հետևաբար հարևանների հետ մեր հարաբերություններից շատ բան է կախված», ճշում է Ակոնոմիկայի նոր խարար Արմեն Եղիազարյանը:

Ներկա դայմաններում արտաքին աշխատանքի հետ կապի լավագույն միջոցը հարևան Իրանի հանդեպ դնությունն է դարձել: Արևմտյան աշխարհի կողմից մերժված խալամական այդ հանրապետությունը դարձել է Հայաստանի ամենակայուն, ամենաստահելի և ամենաբարեկամական հարևանը: Երկու դետությունները առևտրական լավ հարաբերություններ [illegible] դարձյուն են ունեցել անցյալում:

Հայաստանը, որի արտգործնախարար Վահան [illegible] տնտեսա[illegible] [illegible] է խոսում, [illegible] շրջափակումից և մեկուսացումից դուրս գալու լավագույն միջոցը տեսնում է Իրանի հետ ավելի սերտ հարաբերություններ ստեղծելու մեջ: Ռուսաստանից հետո Իրանը դարձել է Հայաստանի երկրորդ խոշոր առևտրական գործընկերը: Իր էներգետիկ ճգնաժամի հաղթահարումը Հայաստանը տեսնում է Իրանի տարածքով անցկացվելիք նավթամուղի մեջ: Մյուս անհավանական թվացող փոխարարը Մեծամորի ատոմակայանն է, որը փակվել էր 1989 ին: Ի հակադրություն արևմտյան փորձագետների արտահայտած կարծիքների, կառավարությունը նախատեսում է վերագործարկել այն այս տարվա աշնանը:

«Հետ է Բրյուսելում նստած հայ տարարդ, թե ատոմակայանի վերագործարկումը անվտանգ չէ: Մենք այստեղ Երևանում ծանրագույն է մնալիքը մեջ: Ռուսաստանից հետո Իրանը դարձել է Հայաստանի երկրորդ խոշոր առևտրական գործընկերը: Իր էներգետիկ ճգնաժամի հաղթահարումը Հայաստանը տեսնում է Իրանի տարածքով անցկացվելիք նավթամուղի մեջ: Մյուս անհավանական թվացող փոխարարը Մեծամորի ատոմակայանն է, որը փակվել էր 1989 ին: Ի հակադրություն արևմտյան փորձագետների արտահայտած կարծիքների, կառավարությունը նախատեսում է վերագործարկել այն այս տարվա աշնանը:

«Հետ է Բրյուսելում նստած հայ տարարդ, թե ատոմակայանի վերագործարկումը անվտանգ չէ: Մենք այստեղ Երևանում ծանրագույն է

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Տնտեսական բարեփոխումները վերածնդի հույսեր են, սակայն...

Ինչպես արդեն հաղորդել ենք, Լոնդոնում լույս տեսնող ազդեցիկ «Ֆայնենշլ թայմզ» թերթն իր հունիսի 7-ի համարում 4 էջ էր նվիրել Հայաստանին: Վերոհիշյալ խորագրի ներքո լրագրող Բրիսթինա Թրիլնդը անդրադառնալով հայերի դաբը ճակատագրին և անդրադառնալով դայմանները ըստ է, որ այնուամենայնիվ «ծանր դայմանները (օտար արշավանքներ, գեղասպանություն, երկրաշարժ) լավ նախադատրաստություն էին ժողովրդի համար դիմանալու ներկա դժվարություններին»:

դնեսականությունն, և հայկական կառավարությունը շատ զգույշ է Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ իր որդեգրած հաղթականության մեջ, բայց այն փաստը, որ այդ տարածքն այսօր տեղի հայ բնակիչների ձեռքին է և ոչ թե Բաքվի իշխանությունների, ինքնարտիվ[illegible] խոսում է ազգային բնազավառում Հայաստանի վերջին 4 տարիների ընթացքում ձեռք բերած հաջողությունների մասին: հաջողություններ, որոնք գոտեղծում են հայերին դիմանալու և ավելի սուր ճգնաժամերի, քան էլեկտրականության դակասն է: Եվ հանուն ազգադատդանման հայ ժողովրդի ստիպել կեցվածքը կարծես թե դանդաղորեն, բայց հաստատուն կերդով, իր դրական արդյունքներն է տալիս:

Հայկական երկնակամարում ամենատայծաղ «աստղն» այժմ տնտեսությունն է, որը չնայած էկեկտրակաերության և ջրի դակասին, ամենարիսկային է նախկին Խորհրդային Միությունի նորաստեղծ հանրապետություններում: Ինչպես դատաբական այդերն են բացատրում, տնտեսական շրջափակումը մի տեսակ մղիչ ուժ է հանդիսացել բարեփոխումների համար, ստիպելով Երևանին դիմելու ամենաարմատական տնտեսական բարեփոխումների իրականացմանը: «Բնական ռեսուրսներից զուրկ լինելը՝ երևի թե մեր փրկությունն լավագույն երաշխիքն է», ճշում է կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանը, ավելացնելով. «մեր ժողովուրդ այսօր լավ է հասկանում, որ հանրապետության գոյատևումն ու բարգավաճումը առաջին հերթին դայմանավորված է ազատ շուկայական հարաբերություններին անցնելու հաղթականությամբ»: Հայաստանում Լենինի ճգնաժամն էլ ավելի խորացրեց արտադրանքի բաղադրման անկումը, որն այդ հանրապետություններում ետ զգացվեց կոմունիզմի փլուզումից հետո բնկած ժամանակահատվածում: 1992 թ ին այն կազմեց 52 տոկոս, իսկ 1993 ին նվազեց ևս 15 տոկոսով: Բայց անցյալ տարի այն հետգարձի ուղին էր բռնել արդեն և արձանագրեց 3 տոկոսի աճ: կառավարական դաբարդյաները ակնկալում են, որ այս տարի ևս 5 տոկոսի աճ կարձանագրվի: Սա անշուշտ արդյունքն է տնտեսության բնազավառում առնատական այն բարեփոխումների, որոնց ձեռնարկել է նախ կառավարությունը 1991 թվականից ի վեր, երբ Հայաստանը անկախության հռչակեց: Առաջին հերթին [illegible] դայդ ողի սեփականաշնորհումն էր, որի հետևանքով այսօր մշակելի հողի ավելի քան 80 տոկոսը գտնվում է մասնավոր հատվածների ձեռքում. [illegible] առաջիկա [illegible] ազատ են թեթևացնելու մեջ: Ռուսաստանից հետո Իրանը դարձել է Հայաստանի երկրորդ խոշոր առևտրական գործընկերը: Իր էներգետիկ ճգնաժամի հաղթահարումը Հայաստանը տեսնում է Իրանի տարածքով անցկացվելիք նավթամուղի մեջ: Մյուս անհավանական թվացող փոխարարը Մեծամորի ատոմակայանն է, որը փակվել էր 1989 ին: Ի հակադրություն արևմտյան փորձագետների արտահայտած կարծիքների, կառավարությունը նախատեսում է վերագործարկել այն այս տարվա աշնանը:

«Հետ է Բրյուսելում նստած հայ տարարդ, թե ատոմակայանի վերագործարկումը անվտանգ չէ: Մենք այստեղ Երևանում ծանրագույն է

ԽՈՍՔ ԱՌԹՈՎ

Մի մոռացեք Շահումյանը. Ամրապնդենք վերադարձի հույսը

